# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ ԿԳՄՍՆ Լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյան

   Լեզվական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Անի Հովնանյան

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Հոկտեմբերի 4-7, Ք. Բեռլին

3. **Հրավիրող կողմը.**

   Աշխատանքային այց, Գյոթե ինստիտուտ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Ծանոթանալ Գերմանիայում լեզուների ուսուցման, ստուգման և գնահատման լավագույն փորձին՝ այն «Հայերենի ստուգման և գնահատման համակարգ» ծրագրի իրականացման ընթացքում հաշվի առնելու նպատակով, ինչպես նաև ՀՀ մշակել հանրակրթական դպրոցներում գերմաներենի ուսուցման արդյունավետությանն ուղղված մեթոդաբանություններ:

5. **Քննարկված թեմաները.**

Քննարկված հիմնական թեմաները եղել են ՀՀ-ում լեզվական պետական նոր քաղաքականության իրականացումը, որը կառուցած է լեզվական բազմազանության, ներառականության և սոցիալ-հաղորդակցական համակեցության մշակույթի արմատավորման արդի ըմբռնումների վրա: Այս համատեքստում մանրամասն քննարկվել են համատեղ ծրագրերի ընդլայնման հնարավորությունները: Որպես լեզվական պետական քաղաքականության բաղադրիչներ՝ քննարկվել են նաև միգրանտ ընտանիքների երեխաների լեզվական աջակցության և կրթության խնդիրները, գերմաներենը որպես օտար լեզու սովորեցնելու նորարարական մոտեցումները, ինչպես նաև անգլերենի դասավանդման պրակտիկան տարբեր տարիքային խմբերում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Աշխատանքային այցի շրջանակում մասնագիտական քննարկումներ են անցկացվել Գյոթե ինստիտուտում, Գերմանիայի Դաշնային Հանրապետության երկրամասերի կրթության և մշակույթի նախարարների մշտական համաժողովի քարտուղարությունում, Դաշնային արտաքին հարցերի գրասենյակում, Բեռլինի Միտտե շրջանի

մեծահասակների կրթության կենտրոնում, Շառլոտ-Սալամոն հանրակրթական դպրոցում, Ամերիկա հուշադարան-գրադարանում: Տարրական և հիմնական դպրոցներ այցի ժամանակ խումբը ներկա է գտնվել դասերի, հանդիպել ուսուցիչների և աշակերտների հետ, ծանոթացել կրթական գործընթացի կազմակերպման փորձին՝ գործնականում ծանոթանալով ներառական կրթության, օտար լեզուների ուսուցման մեթոդներին, որոնք կարող են օգտակար լինել ՀՀ նոր լեզվական պետական քաղաքականության իրականացման շրջանակում: Կարևորվել է միգրանտների ինտեգրման գերմանական փորձին խորքային առումով ծանոթանալը՝ Հայաստանում ակտիվացող միգրացիոն հոսքերի կառավարման մեջ ինտեգրման բաղադրիչն ավելի խորը պատկերացնելու առումով:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Գյոթե ինստիտուտի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել նոր ձևաչափեր մշակել համատեղ փորձի փոխանակման ծրագրերին: Որոշվել է խորացնել ռազմավարական համագործակցությունը լեզուների ստուգման և գնահատման, ինչպես նաև լեզուների դասավանդման մեթոդաբանության հարցերում և պարբերական դարձնել փոխադարձ աշխատանքային համագործակցությունը՝ ըստ քննարկվող նոր ձևաչափերի:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համագործակցության ձևաչափերը ենթակա են քննարկման ՀՀ ԿԳՄՍ նախարարի հետ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

13.1.2026